

կազմէր այն ահաւոր ատեան որ կը կռ-
չուէր Երից ժողով, կամ լաւ ևս Պետու-
թեան խուզարկուները (Inquisiteurs de
l'Etat), Տասանց ժողովին արթուն և ա-
հեղ աւանդապաշնները: Յետոյ կու գար
Համաժողովը (pieno collegio) իւր վեց
խորհրդականներով, որուն նախագահն էր
ստոր. Քառասնից պետերը (capi di qua-
ranta), ցամաք երկրին հինգ իմաստուն-
ները, gli Ordini հինգն, եօթնեկի նա-
խագահն (Savio di Settimana) և այլն:

Շարայարեկի

Հ. Մ. Վ. ՍԱՀԱԿԱՆ

տասնանդամները կ'ընտրուէին տոժն և իրեն խորհրդա-
կաններէն, և բարձրագոյն ատեանը կը վստահաւորէր ա-
նոց ընտրութիւնը: Այս ժողովոյն հաստատուելուն նպա-
տան էր ազնուականութեան զոտոգութիւնը ճշդել, ու-
ճիւղներուն առջին անունը, յանցարարները հրապարակաւ
պատժել:

Համաժողով (pieno collegio), որուն կը մասնակցէին
նաև ամբողջ Աւագանին, այսինքն տոժն իր բարձրա-
գոյն և ստորին խորհրդականներով: Այս ժողովոյն երբ
հաստատուելը և իր անուանակոչութեան պատճառը
չի գիտցուիր: Իր զվարտոր զորքն էր խնդիր մը ծերա-
կուսին դիմաց չի հանած լաւ մը ցննել. ձերբակալէն
իրեն յանձնուած խնդիրներուն վճիռ տալ, օտար աղ-
ցաց զննաստներուն և պատգամաւորներուն ունկնդրութիւն
շնորհել, են. ևն:

Քառասունց կ'ընտրէր քառասուն խորհրդականներէ բաղ-
կացած ժողովը, և էր եղեռնադատ և քաղաքային իւր-
նորոց բարձրագոյն ատեանը: Սակայն երբ Պետութեան
ընդարձակելուն խնդիրներն ալ բազմացան, հարկ եղաւ
քաղաքային խնդրոց համար ուրիշ քառասունց ժողով մը
հաստատել, որով առաջինը մի միայն եղեռնադատ բար-
ձրագոյն ատեանն եղաւ: Սակայն զարժեալ ուրիշ ստո-
րաբաժանունն մ'ալ եղաւ և ըստեցան քաղաքային նոր
Քառասունց, քաղաքային Հին Քառասունց: Այս երեք
սեակն քառասունց ձեռքն էր Պետութեան ներքին և ար-
տաքին խնդիրներու և զորքերու դատաստանը, միայն
վաճառականական զորքերուն չէին խառնուէր:

Հինգ իմաստունց նոր գրաստն երկիրներու վրայ. այս-
պէս կը կոչուէր Հինգ իրաւագէտներէ բաղկացած ժո-
ղովը, որուն յանձնուած էր ցամաք երկրի վրայ զորքն
րուն հոգաւորութիւնը: Եկտոյ այս ժողովոյն նոր գրա-
ստն ծրկիրներու կցեցան Savi agli Ordini և Savio
di Settimana ըստած ժողովները, միահամուռ կը ձեռ-
ցունէին տասներեք անձանց ժողով մը, որուն յանձնուած
էր նովային զորքերու, զինեալ և անզին նահաւոր, վա-
ճառականութեան, կրթւած և Գործու կզգիներուն, Տալ-
մաքայի, Ալպանիոյ և Ռումանիոյ զորքոց վերին ակո-
ղութիւնը:

Մեծ. Թարգմ.

Գ Ի Տ Ա Կ Ա Ն Բ Ա Ժ Ի Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Բ.

Տնտեսագիտութեան ծագումը և կազմութիւնը

Խաւիթ և Ֆրանսա փոփոխակի կը
ճգնին Տնտեսագիտութիւնը ծնած ըլլալ-
նուն առաջնութեան պատիւը իրարմէ յա-
փըշտակելու:

Արդարութիւնը յարգած ըլլալու համար
դիտել կուտանք որ Տնտեսագիտութիւնը,
նոյն իսկ ժամանակակից ամենէն նշանա-
ւոր տնտեսագէտներուն վկայութիւններու
վը, խաւիթ մէջ ծնունդ առաւ, թէ չքնադն
խաւիթ անոր օրօրոցն եղաւ և թէ ոչ նուազ
չքնադ Ֆրանսան ալ անոր դայեակը. ան
խաւիթ մէջ արձակեց իւր առաջին ճիշդ
և Ֆրանսայի մէջ ալ քալելու սկսաւ, ուր
և մեծացաւ և ուժեղացաւ:

Ալպարէն, նախ և առաջ խաւիթից ե-
ղան որ սկսան յուզել տնտեսական խնդիր-
ներ. այսպէս, դրամական անկարգութիւն-
ներ յառաջ գալով դրամին բնութեանն
ու պաշտօնին վրայ եղած նախապաշա-
րուշներէ, 1500ին վերջերը խաւիթ մէջ
տեղի տուին տնտեսագիտական բուռն վի-
ճաբանութիւններու¹:

Իսկ 1615 թուին է որ քաղաքական
տնտեսութիւնը՝ առաջին անգամ ըլլալով՝

1. Այսպէս 1579ին Կարտէթ Գարուֆֆէ տի Ռէճեֆօ
ի տոյ կ'ընծայէր իւր *Moneta e la vera proporzione tra l'oro e l'argento* (Կարմը և ոսկիի և արծա-
թի միջև եղած ճիշդ համեմատութիւնը) անուն դիւրը:
Տակիտոսի խաւիթի երեկէ Քարգմանիէն Պերնարտո
Տալպացարի ալ գրեթէ նոյն Բուականներուն կը գրէր
Lezioni sulle monete e sui comodi (Կրթաներու և
փոխանակարկերու վրայ Դասեր) վերնագրով Հրատարա-
կութիւն մը:

Ի մէջ այլոց անմոռանալի է Մօնեանցի հոյակապ
գիտական Մեթոմաթիկ որ *Riforma monetaria ge-
nerale per tutta l'Europa* (Ընդհանուր դրամական
բարեփոխութիւն քովնգրակ Եւրոպայի մէջ) ոսկեմատեա-
նին մէջ ճիշդ և յստակ գաղափարներ պարզած է, որոնց
մեծամեծ գովեստներու արժանի եղած են նշանաւոր արև-
ստեագէտներէ և մասնաւորապէս պեկէրցաքի Մ. Լա-
վընի կողմէ:

ստացաւ իւր այդ անունը (որով և այսօր ան արդէն ծանօթ է), ֆրանսերէն գրքի մը մէջ՝ *Traité de l'Economie politique* մէջ, Անթուան տը Մօնքրէթիէնի (Antoine de Montchrétien) կողմէ գրուած։

Այսու հանդերձ, *Economie* բառը արդէն ի վաղուց անտի գործածուած էր և նոյն իսկ Քաննոփոնի գործերէն մին այդ վերնագիրը կը կրէ։ սակայն, նախնիք աւտով առտնին տնտեսութիւնը կ'իմանային *οἶκος* = տուն և *νόμος* = օրէնք, կանոն)։ Քաղաքական յատկացուցիչ ածականը, որ Մօնքրէթիէնէն սկսեալ գործածուած է, կը ցուցնէ որ խնդիրը տնական տնտեսութեան վրայ չ'է, այլ քաղաքին, ազգին տնտեսութեանը վրայ է։

Քայց և այնպէս պէտք է խոստովանինք որ մեր այսօր տնտեսական հարցեր կու չաճնեմք մէկ քանինքը ամեն ժամանակ գրուած էին մարդկան ուշադրութիւնը։ օրինակ, դրամի, վաճառականութեան և անհատներն ու պետութիւնը հարստացնելու միջոցներուն վերաբերեալ հարցերը։ Եկեղեցւոյ սրբազան հարց դատապարտած էին շրայութիւնը, հարստութեանը անհատաւորութիւնը և տոկոսաւոր փոխաւորութիւնը։ իսկ, աւելի հին ժամանակներու մէջ, Հելլէններուն մօտ Քաննոփոն և Թուկիտիդէս և Հոովմայեցւոց մօտ ալ կ'իկերոն՝ իրենց գրական երկերուն մէջ՝ ճշգրիտ և եզական յայտնութիւններ բրած են տնտեսագիտութեան մասին։ մանաւանդ Արիստոտէլ հիանալի կերպիւ վերլուծումն բրած է դրամին, արհեստներու բաժանու մին, սեփականութեան ստացումին ձևերուն, կայլն։ Սակայն, ասոնցմէ և ոչ մէկը տեսած էր այն սերտ կապը որ իրարու կը միացնէ այդ զանազան հարցերը, այսինքն թէ խորհած չ'էին զայնս միացնելով մէջտեղ բերելու՝ ուրոյն գիտութեան մը նիւթը կազմելու համար։ Մ. Ժիտին բաժին պէս, այն ժամանակները այդ տեսակ հարցերը աւելու իմաստուններու (σώφρος) գիտութեանը մասն կը կազմէին քան թէ գիտականի մը ձեռնհասութիւնը։ Այդ տեսակ հարցերը՝ բարի խորհուրդի կամ խրա-

տի ձևին ներքեկ՝ կը ներկայացուէին ըլլայ վեհապետներու, ըլլայ սոսկականներու։

Ամերիկայի գիտը եղաւ որ առաջին անգամ ըլլալով, Ժ2. դարուն և աւելի Ժի. դարուն մէջերը, առիթ տուաւ կազմութեանը տնտեսական ճշմարիտ վարդապետութեան հրոյրեան (Système) մը, այսինքն այդ ժամանակամիջոցին մէջն է որ վերոյիշեալ խորհուրդները՝ համակարգեալ և պատճառարանեալ պատուիրաններու ամբողջութեան մը ձևը գզգցան։ Անգլիոյ, Իտալիոյ և Ֆրանսայի նման երկրները, որոնք նախանձու աչօք կը դիտէին Սպանիոյ Նոր — Աշխարհին հանքերէն զանձեր քաղել հանելը, սկսան խորհիլ թէ արդեօք Բնչ միջոցներով իրենց ալ կրնային իրենց համար հայթայթել ոսկին ու արծաթը։ Եւ ահա՛ ճիշդ այդ միջոցին, այսինքն 1613ին է որ Անթօնիօ Սէրրա (Antonio Serra) իտալացին՝ վերոյիշեալ Մօնքրէթիէնի գրեմէն առաջ՝ Նափօլի իւր բանտին մէջ տուն տալով գրել կու տայ իւր Համառօտ մաս այն պատճառներուն վրայ որոնք կարող են վիտայեղկ ոսկին և արծաթը քիսա հանք չ'ունեցող երկրներու մէջ (Breve trattato sulle cause che possono far abbondare i regni d'oro e d'argento ove non ci sono miniere) անուն երկը։

Այդ դիտաւորութենէ զրդեալ կարծեցին իրենք ալ գտած ըլլալ միջոցը՝ օտարին ծախելով իրենց ձեռագործի արտադրութիւնները (manufacture) և այդ նպատակաւ ամեն ճիգ թափեցին զարգացնելու համար արտաքին վաճառականութիւնը և ձեռագործական ճարտարաբանութիւնը՝ հաստատելով առ այդ մասնաւոր դրութիւն մը խճողուած բոլորովին կնճոռոտ և արուեստակեալ կանոններով և պայմաններով։ Եւ առիկայ կոչուեցաւ Թաւաքարական հրոյրեան (Système Mercantile) որոյ մասին յետոյ առիթ պիտի ունենանք մանրամասնօրէն խօսելու։

Քայց ԺԲ. դարուն մէջ տեղը հրոյրեաներու դէմ բուն և սուր հակագործութիւն մըն է ծայր կուտայ։ Այլ ևս ուրիշ բա-

նի վրայ չ'են խորհիր եթէ ոչ վերազառա-
նալու թնական վիճակին և կը վանեն այն
ամեն բան որ արուեստական յորինուա-
ծութիւն մը կը մատնէ : Այս զգացումը
կը տիրէ նաև նոյն դարուն ամբողջ գրա-
կանութեանը մէջ . այսպէս, քաղաքական
գիտութիւնն ալ՝ Ռուսսօյով և Մօնթէսքիէօ-
յով՝ ատկէ կ'ազդուի և կը ներշնչուի :

Այս վերջնոյն Ոգի Օրինաց (Esprit
des lois) անուն գիրքը կ'սկսի հետեալ
անմահական պարբերութեամբ՝ «Որենքնե-
րը անհրաժեշտ յարաբերութիւններ են, ու
թանց իրերոս թնութեան կ'աճանցին», և
դարձեալ Մօնթէսքիէօ իւր այդ միենոյն
գործին յառաջարանին մէջ կ'ըսէ՝ «Ես
իմ սկզբունքներս քաղեցի ոչ թէ իմ նա-
խապաշարունմեմէս, այլ իրերու բնութե-
նէն» :

Եւ մեծին Մօնթէսքիէօյի այս գերա-
զանցապէս բանաւոր տեսութիւնը իրա-
ւամբ կը ներկայացնէ տնտեսագիտութեան
իսկութիւնը : Ահա, ատկէ ներշնչուած,
Լուդովիկոս ԺԵ. Ի բօիշկներէն սօքթէօր
Քէնէյ (Quesnay) 1758ին կը հրատարակէ
իւր *Tableau Economique* (Պատկեր Տըն-
տեսական) անուն հոյակապ գործը որ մաս-
նագէտներու կողմէ կը նկատուի իբր տըն-
տեսագիտական աւետարան մը և որ ըստ
Միրապօյի աշխարհիս երեք նշանաւոր գիւ-
տերէն մէկն է՝ գիրք, վաճառականութիւնը
և Քենէյի Տնտեսագիտական Պատկերը :

Քէնէյ անմիջապէս երեւիլի հետեւորդներ
կ'ունենայ որոնք ինքզինքնին տնտեսագետ
(économiste) կը յորջորջեն և իրենց
դրութիւնն ալ՝ Բնափարային (Physio-
cratie, յունական բառով մը որ կ'ստա-
փարային թնութեան կը նշանակէ) :

Սակայն, ի սէր ճշմարտութեան, պար-
տինք՝ շատերու վկայութեան համեմատ՝
յիշատակելի որ տնտեսագիտական այդ վար-
դապետութեան յղացողը եղած է վաճա-
ռական-տնտեսագէտ մը՝ Վէնսան տը Գուռ-
նէյ (Gournay) (1712-1759) որ նոյն-
պէս ինքն է հռչակողը *Laissez faire,
Laissez passer* ի բանաձևին՝ :

Քէնէյ՝ Գուռնէյի զաղափարներն իւրացը-

նելով հանդերձ՝ իրեն առաջնորդ կ'ունե-
նայ Միրապօյ մարքեզը (հայրը), Պօպօ
արքան, Լըթրօն, Տիւփօն, Նըմուր, Մալ-
հէրպ, Մօրէլլէ արքան և ար Մօնթինի.
և Տնտեսագիտութեան սկզբունքները ժո-
ղովրդականացնելու նպատակաւ կը հրա-
տարակէ *Des maximes générales du
Gouvernement d'un règne agricole*
անուն գիրքը՝ :

Բնափարայններու (Physiocrate) կազ-
մութեանը վրայ վերոյիշեալ ծանօթու-
թիւններէն յետոյ, տեղն է այժմ յայտա-
բարելու թէ տնտեսագիտութեան մէջ եր-
կու նոր սկզբունքներ մտցուցին որոնք
իսկապէս բոլորովին ներհակ են թաճա-
րական դրութեան (Système mercantile),
այսինքն անոնք հաստատեցին՝

Ա. «Մարդկային ընկերութիւններու
բնական և էական կարգի» մը գոյութիւնը
(ասիկայ նոյն իսկ վերնագրէն է բնափա-
րականներէն մէկուն՝ Մէրսիէ տը Լա Ռի-
վիէրի մէկ գրութեան) որ իւր ակնյայտ-
նի հանգամանքովը կ'ստիպէ զմեզ իրեն
համակերպելու, որով անօգուտ են օրէնքներ,
կանոնադրութիւններ կամ դրութիւններ,
միայն գործելու ազատութիւնը կը բաւէ :

Բ. Նախապատուութիւն երկրագործու-
թեան հանդէպ վաճառականութեան և ճաւ-
տարականութիւնի : Ըստ իրենց, միայն երկի-
րը, մայր բնութիւնը, աղբիւրն է հարուս-
տութեանց . միայն ան է որ կուտայ զուտ
արտադրութիւնը, երկրագործական դասա-
կարգէն զատ ընկերութեան բոլոր դասա-
կարգերը ամուլ դասակարգեր են :

Այդ երկու սկզբունքներուն առաջինը
իբր վճռական հիմունք ծառայեց տընտե-
սագիտութեան ամբողջ շէնքին . ապաքէն,
որէն եզբելութիւններ գիտութեան մը իբր
հիմ չ'են կարող ծառայել եթէ իրենց մի-
ջև եական և թնական կարգի մը գոյութիւնը

1. Գեթաղաբար բնա թողած չ'է գրաւոր որ և է
աշխատութիւն :

2. Մարդկային գիտութեան յիշատակարան կողմ
Ֆրանսայի լայնածաւալ Համալսգիտական Բառարանը
Քէնէյի եր կարգի *Fermiers Grains* վերնագրով պա-
րունակած երկու յօդանունները : Տճա Encyclopédie :

հաստատուած չ'է. այդ սկզբունքը իբր հիմնաքար ծառայեց նաև ամբողջ քաղաքականութեան մը որ նախասահմանուած էր տեկելու ամբողջ դար մը և մեծամեծ գործեր կատարելու անգղաական քաղաքական կանոնադրական ներքէն¹:

Գալով Բ. սկզբունքին, թէպէտև կու չուած էր քարերար հակազգեցութիւն մը գործելու թաւեցարական դրութեան մոլորութիւններուն դէմ, ընդհակառակը ինքն ալ մոլորութեամբ մը վարակուած էր, մոլորութիւն մը զոր պիտի պարզենք քիչ յետոյ և որ բաւական եղաւ փութացնելու բնավարական դպրոցին կործանումը²: Արդէն, նախ և առաջ, նոյն ինքն մեծն թիւրկոյ եղաւ որ հռչակելով դրամազրկին կարեւորութիւնը՝ կտրեց այն չափազանցեալ կարեւորութիւնը զոր բնավարականը (իւր ընկերները) կ'ընծայէին երկրին՝ նկատելով զայն իբր միակ ազդիւր հարստութեան:

Եւ, ահա, Քէնէյի և թիւրկոյի ժամանակակից և բարեկամ սկովտիացի քրօֆէսոր Ատամ Սմիթի գրքին՝ երևումը, 1776ին, Գաղաքական Տնտեսութեան Պատմութեան մէջ վճռական դարազուլս մը կը բանայ՝ գրեթէ ամբողջ դարու մը տեւողութեանը միջոցին անգլիական դպրոցին անվիճելի նախապատուութիւն մը ապահովելով: Անցողակի ըսենք որ այդ թանկագին գիրքը իւր հեղինակը կ'արժանացնէ հայր Գաղաքական Տնտեսութեան տիւրգոտին, տիւրգոս մը որ ոմանք քիչ մը չափազանցեալ կը գտնեն. և, այդ ալ իրաւամբ, քանի

որ, ինչպէս որ ըսինք արդէն, այսօր անհերքելի կերպիւ վաւերագրուած է թէ Գաղաքական Տնտեսութիւնը իտալական պատարար հողին վրայ ծնաւ, և Քրանսական ըղջիւնաւոր երկրին վրայ ալ զարգացաւ և մեծացաւ. իսկ անգլիացին Սմիթ եղաւ անոր միակ մարզիչը, զայն հրահանգողն և կրթողը:

Թէ ինչ է Ատամ Սմիթի տեսութիւնը: Ատամ Սմիթ կը մերժէ բնավարական նաց երկրորդ սկզբունքը՝ տալով ճարտարարուեստին իր օրինաւոր տեղը հարէստութեանց արտադրումին մէջ. ասոր հակառակ, Սմիթ ամենափառաւոր կերպիւ կը հաստատէ և կ'ընդարձակէ առաջին սկզբունքը, այսինքն կը յայտարարէ թէ կը հաւատայ գոյութեանը տնտեսական բնական օրէնքներու՝ որպէս գործելու ազաւտութեանը, իբր կանոն գործնական ուղղութեան:

Ըստ վկայութեան Տնտեսագիտութեան ամենէն հեղինակաւոր վարպետներու՝ Ատամ Սմիթ եղելութիւնները դիտելու և պատմութենէն ճշգրէիք դասերուն տեսակէտէն շատ գերիվեր է բնավարականներէն, անիկայ այն աստիճան գիտցած է թափանցել տնտեսագիտութեան ապարէզէն ներս որ իրմէ ետքը այդ գիտութեան սահմանները անցնող մը եկած չ'է:

Այսու հանդերձ, իւրաքանչիւրին իւր արժանեաց բաժինը չի զլանալու համար, դիտել կուտանք որ Ատամ Սմիթ նպաստաւորութեամբ մասնաւորապէս իւր ապրած միջավայրէն որ է Անգլիա՝ իւր մեծափառ

1. Քէնէյի ամենէն նշանաւոր հետեւորդն եղաւ հոգաւոր անտեսագէտ թիւրկոյ (Turgot) որ, ձեռնպահ մնալով բնավարական դպրոցին մշտն կողմնէն, ինքը առաջինը եղաւ այդ քաղաքականութիւնը գործադրելու, նաև իւր խօսքի ելմանից տեւողութեանը միջոցին և վերջն ալ իբր նախարար Լուզովիլիս ԺՊ. Ի. Նախ և առաջ մասնաւոր հրովարտակով հաշակեց փոխանակութեանց ազատութիւնը՝ ընկելով առ այդ ներքին մաքսը որպէս և արժեքաց վրայ հաստատուած մաքսը և վերջն ալ՝ դարձեալ հրովարտակով՝ հոգակեց նոյնպէս այլառուքերու ազատութիւնը՝ ընկելով արհեստագիտութիւնները:

2. Դիտելով և որ բնավարականներու կազմած խումբը նոյն ժամանակին մէջ իւր թշնամաբար՝ Ալանդ Տնտեսագիտութեան (La secte des économistes) կը կոչեն: Այս խումբը 1725ին ի վեր՝ այսինքն Լուզովիլիս ԺՊ. Ի. օրով՝ հետեւեալ վերնագրով պարբերական թերթ մը

կը հրատարակէր «Ephémérides du Citoyen ou Chronique de l'esprit national. այս citoyen և esprit national բառերն էին այդ նախադասական մակնունդին շոնիլ տառերը, որովհետեւ այդ ժամանակներու մէջ այդ անակ բառեր մեծ յանդիմութիւն մը էին, ճիշտ այդ ժամանակն նախնիաց եպիսկոպոս շրջանին պէս:

3. Այդ ամենէն գրքին անունն է «Աղգրութեան ճարտարութեան բնութեանը և պատճառներուն մասին հետազոտութիւններ»:

Ատամ Սմիթ ծնած է ի Գիրգալտի 1723ին և մեռած 1790ին. իմաստասիրութեան ուսուցիչը ըլլալով ի կըլաւորով հրատարակած է նաև «Քարոյական գոգացումներուն վարդապետութիւնը» անուն գիրքը:

Իտալիոյ Էն հոյակապ անտեսագէտներէն մին Պոզզարուս զՍմիթն էր դաւանել իբր կալիտի փառաքան ՏԵՆ. տեսութեան:

հայրենիքը, օգտուելով անտարակոյս Պրանսայի մէջ բնավարականաց ուսումնասիրութիւններէն և իրեն հայրենակից Նորթհի, Չայլտի և Քէթիի տնտեսագիտական հրատարակութիւններէն որոնք մինչև ժՐ. դարը զբոսեցին աշխատութեան ազատութեան գաղափարը և պարզեցին դրամին սեպհական պաշտօնը, և քիչ մ'ալ հետեւելով հոշակաւոր պատմաբան և իմաստասէր Դաւիթ Հիւսի որ 1752ին կը հրատարակէ իւր Տնտեսագիտական ձաշակները։ Այսպէս Ատամ Սմիթ ի վիճակի եղաւ ճանչնալու հիմնական և էական մտքութիւնները թանգարականաց, զօլպէրթականաց¹ և բնավարականաց, որոնց առաջինները հարստութեան պատճառը կը վերագրէին դրամին, երկրորդինները գործարաններու և ձեռարուեստներու, և վերջիններն ալ՝ հողին և հողագործութեան, որով և տեսաւ ու ապացոցուց որ հարստութեան գերագոյն պայմանն է աշխատարիւնը, այսինքն մարդկային գործունէութիւնը։

Ատամ Սմիթէն քիչ յետոյ, միեւնոյն ժամանակամիջոցին, Անգլիոյ մէջ երևան կուգան երկու կարող տնտեսագէտներ ևս որոնց տեսութիւնները՝ ոմանց կողմէ փառաբանուած և ոմանց կողմէ դատապարտուած անիծուած, դարաւոր դրոշմ մը կուտան տնտեսագիտութեան. ատոնց մէկն է Մալթուս որուն բազմամարդութեան մասին հաստատել ուզած օրէնքը (մալթուսականութիւն—1803) համայն տնտեսագիտութեան մէջ ահագին զղրդին մը յառաջ բերաւ. իսկ, երկրորդն է Ռիզարտո (1817), ոչ նուազ նշանաւոր իւր Երկրի հասոյրի մասին յօրինած օրէնքովը, որպէս և վերացական մէթոտին չարաչար և յանդէպս գործածած ըլլալովը։

Արդ, միեւնոյն ժամանակամիջոցին, Ֆրանսայի մէջ Ժան—Պաթրիսթ Սէյ կը հրատարակէ իւր Քաղաքական Տնտեսութիւն, վերնագրով գրուածը (Traité d'Economie Politique—1803), որով հոյակապ հեղինակը կը հանդիսանայ գերազանցապէս ժողովրդականացնող մը տնտեսագի-

տական սկզբունքներուն։ Եւ, իբր ատաշին տնտեսական կարգաւորեալ և կանոնաւոր հրատարակութիւն, եւրոպական բոլոր լեզուներու թարգմանուելէ յետոյ, իբր օրինակ կը ծառայէ իրմէ վերջը երևան եկած անթիւ տնտեսական դասագրքերու²։

Ամենէն աւելի այդ գրքին մէջն է որ Քաղաքական Տնտեսութեան իբր քննական գիտութիւն ունեցած հանգամանքը փառաւորապէս պատկերացուցուած է։ Ատամ Սմիթ Տնտեսագիտութիւնը սահմանած էր «իբր նպատակ ունենալով հարստացնելու միանգամայն թէ ժողովուրդը և թէ վեհապետը», անոր վերագրելով այդպէս գործնական նպատակ մը։ Մինչդեռ, Ժ.—Պ. Սէյ՝ որբագրելով այդ սահմանը՝ կ'ըսէ՝ «նախամեծար կը համարիմ ըսել որ Քաղաքական Տնտեսութեան նիւթն է ծանօթացնել այն միջոցները որոնցմով հարստութիւնները կը կազմուին, կը բաշխուին և կ'սպառին», այդպէս ըսել ուզելով որ Տնտեսական կարգին մէջ ամեն բան կ'ընթանայ ինքնիրեն, ինքնաբերաբար, ինքնաշարժուով։

Եւ, ահա, այդ թուականէն սկսեալ, քաղաքական Տնտեսութիւնը վերջնականապէս կը կազմուի՝ իւր դատական ձևին ներքեւ Սակայն, ինչպէս ուրիշ ամեն բանի մէջ. այսպէս ալ շատ չ'անցնիր Տնտեսագիտութեան գետնին վրայ բաժանումներ կը ծնին տեղի տալով տարբեր տարբեր դպրոցներու որոնց իւրաքանչիւրին առանձնայատուկ նկարագիրը պիտի ջանանք պարզել յետագայ զխոյն մէջ, հետեւելով գիտութեան ամենէն վերջին հաշիւացներուն այս մասին նկատմամբ։

Փարիզ

ՅԱՐՈՒՅԻՍ ՈՒՆՁԵԱՆ

1. Իւր յարմար տեղոյն մէջ մասնաւոր կերպիւ պիտի պարզենք զօլպերթականութիւնը (Colbertisme)։

2. Ժան—Պաթրիսթ Սէյ ծնած է ի Լիւս 1767ին և մեռած ի Փարիզ 1832ին։ Վերոյիշեալ թանկագին աշխատութիւնէն զատ, գրած է՝ «Գիւնաւորաբար»՝ Քրիստոնեական Քաղաքական Տնտեսութեան (Catechisme d'Economie Politique—1815) և Կատարիսկ ընթացք Քաղաքական Տնտեսութեան 1823—1830 (Cours Complet d'Economie Politique) որ եւ նկատուի իբր Քերականութիւնը Տնտեսագիտութեան։